ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՊՈՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻԼԻԿԻԱ. ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒՀՈՒՄ[1]

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i68.160

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայոց պատմության բազմաբնույթ հիմնահարցերի ուսումնասիրության բնագավառում առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում հայկական պետականությունների պատմության արժևորումը: Այդ առումով անժխտելի նշանակություն ունի Կիլիկյան Հայաստանի պատմության շուրջ 300-ամյա շրջափուլի հետազոտումը, որը կապված է պատմաքաղաքական ու մշակութային ծավալուն փորձի առկայության հետ:

Հոդվածում փորձ է արվում ներկայացնելու հայոց պետականության պատմության շատ կարևոր մի ժամանակահատվածի՝ Կիլիկյան Հայաստանի պատմության պատմաքաղաքակրթական հիմնախնդիրների վերհանումը և դրանց դասավանդման առանձնահատկությունների կարևորությունը բուհում: Կիլիկյան Հայաստանի պատմական անցյալը մեր պատմության ողբալի դրվագներից չէ, հետևաբար կատարված հետազոտությունը կարող է օգնել ճանաչել պատմական անցյալի տիպաբանական այնպիսի էական

[1] *Հետազոտությունն իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (Գիտական ծրագիր № 10-5/ՊԲ-24):*

իրողություններ, որոնց ազդեցությունը ներկայի վրա ակնհայտ է և անցյալը դարձնում է ավելի հասկանալի:

Բանալի բառեր և արտահայտություններ. *Հայկական Կիլիկիա, Կիլիկիայի հայկական իշխանապետություն, Կիլիկիայի հայկական թագավորություն, աշխարհագրական յուրահատկություններ, ժողովրդագրական միատարրություն, պետականության վերականգնում:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի նկատմամբ Բյուզանդիայի տածած ազգային ու կրոնական ատելության արդյունքում և 1045թ. Անիի դավաճանական անկումով Հայաստանը թեև կորցրեց իր թագավորական հարստությունը, սակայն հայ ժողովուրդը երբեք չկորցրեց իր անկախության ոգին և ազատության հասնելու ըղձանքը: Դեռ ավելին. Հայաստանի դառնաղետ իրավիճակը և անցյալի փառահեղ պատմության ներշնչանքը դարձան հայ ժողովրդի ապագա գործունեության մեծագույն ուժը: Այս անգամ, հայկական քաղաքական և ազգային նոր գործունեության ասպարեզ դարձավ Կիլիկիան կամ Սիսուանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունը կատարվել է պատմական սկզբնաղբյուրների, գրականության տվյալների և ընդհանրապես փաստերի պատմաքննական, պատմահամեմատական-համադրական, մեթոդաբանության քննությամբ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1.Պատմաքաղաքակրթական առումով մեր կողմից առանձնացված առաջին դիտարկումը վերաբերում է **Հայկական Կիլիկիայի պատմության ժամանակաբաժանմանը և այդ բաժանումների տիպաբանական յուրահատկությունների ու տարբերությունների առանձնացմանը:**

Հայկական Կիլիկիայի պատմությունը պայմանականորեն կարելի է բաժանել **հինգ** ժամանակափուլերի:

Ա. Հայկական իշխանությունների հաստատման ժամանակաշրջան:

Բ. Կիլիկիայի տարածքների գրավման ժամանակաշրջան՝ 1080-1137թթ.:

Գ.Կիլիկիայի տարածքների վերստին նվաճման և հաստատման ժամանակաշրջան՝ 1137-1198թթ.:

Դ. Կիլիկիայի թագավորության ժամանակաշրջան՝ 1198-1342թթ.:

Ե. Վերջին՝ կիսով չափ օտար և կիպրոսցի թագավորների գահակալման ժամանակաշրջան՝ 1342-1375թթ. (Ծովիկեան Յ., 1939):

Առաջին՝ Կիլիկիայում հայկական իշխանությունների հաստատման ժամանակաշրջան՝ 1045-1080թթ., որը տևել է՝ շուրջ **35 տարի:** Մինչև 1080թ. Կիլիկիայի մերձակա տարածքներում, հիմնականում իշխանական տոհմերից սերված հայերը, բյուզանդացիների մոտ ծառայության էին անցնում որպես զինվորականներ և կառավարիչներ: Սակայն 1071թ. Մանազկերտի ճակատամարտից հետո, երբ կայսերական իշխանությունն արևելքում թուլացավ, հայ իշխաններն օգտվելով առիթից դարձան ինքնիշխան կալվածատերեր, որոնց ենթակայությունը բյուզանդացիներից սկսեց կրել սոսկ ձևական բնույթ: Տիրելով ընդարձակ կալվածքների, քաղաքների և բերդերի՝ հայերն աստիճանաբար իրենց ձեռքում կենտրոնացրին նաև Կիլիկիայի ռազմական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքը:

1042-80-ին Դաշտային Կիլիկիայի կառավարիչն էր հայ իշխան Աբլղարիբ Արծրունին, սակայն այս շրջանում ամենահաջողակ իշխաններից էր Փիլարտոսը, որի իշխանապետությունն ընդգրկում էր Մելիտենեի, Մարաշի, Եդեսիայի ու Անտիոքի շրջանները:

11-րդ դարավերջին Փիլարտոսի մահից և նրա իշխանության կազմալուծումից հետո, Կիլիկիայում իրենց գոյությունն էին շարունակում պահպանել հայկական **վեց** իշխանություններ՝

1. Գանձակի շրջանից գաղթած և Լամբրոն ու Պապեռոն բերդերում հաստատված **Օշինի** Հեթումյանների իշխանությունը,

2. Բարձրբերդում և Վահկայում **Ռուբեն Ա** իշխանի հիմնած Ռուբինյանների իշխանությունը,

3. Բյուզանդական նախկին զորական **Թաթուլ իշխանի** իշխանությունը Մարաշում,

4. Գող Վասիլի՝ որպես սելջուկյան հպատակի, իշխանությունը Մարաշի ծայրամասում գտնվող Ռապան և Քեսուն ամրոցներում,

5. Եփրատի վերին հոսանքում՝ Մելիտենեում հաստատված **Փիլարտոսի** նախկին զինվորականներից՝ **Գաբրիելի** իշխանությունը՝ սելջուկյան ձևական ենթակայությամբ:

6. Փիլարտոսի մեկ այլ զորականի՝ **Թորոսի** վերահսկողության տակ գտնվող Եդեսիայի իշխանությունը:

Երկրորդ՝ Հայերի կողմից Կիլիկիայի տարածքների գրավման ժամանակաշրջան՝ 1080-1137թթ., որը տևել է շուրջ **57 տարի**: XI-XIIդդ. Ռուբինյանները միջազգային իրադրության բավականին բարդ պայմաններում, խելամտորեն օգտագործելով բյուզանդացիների, խաչակիրների, սելջուկների փոխադարձ թշնամանքը, ամրապնդեցին Կիլիկյան Հայաստանի դիրքերը: Հայկական Կիլիկիայի գերագույն իշխանությունը մարմնավորող թագավորամեծար հայոց իշխանաց իշխանը (պարոնաց պարոն), կամ մեծ իշխանը (մեծ պարոն) ի դեմս՝ Ռուբեն Ա-ի, նրա որդի՝ Կոնստանտին Ա-ի և երկու թոռների՝ Թորոս Ա-ի և Լևոն Ա-ի, աստիճանաբար, թիզ առ թիզ գրավեցին Լեռնային Կիլիկիայի հայաբնակ հողերը և հնազանդեցնելով շրջակա բոլոր բերդատերերին՝ դարձան նրանց կալվածքների տեր ու տիրականը՝ միաժամանակ հաղթահարելով երկրի մասնատվածությունը: Ռուբինյան առաջին հայ իշխանները ոչ թե ինքնակոչ բախտախնդիրներ էին, ինչպես երբեմն նրանք ներկայացվում են պատմագիտության մեջ **(Grousset R., 1934; Տեր-Պետրոսյան L., 2005)**, այլ հայրենիքի անկախությունը ճաշակած վերջին սերնդի ներկայացուցիչներ՝ օժտված պետականամետ մտածողությամբ:

Երրորդ՝ Հայերի կողմից Կիլիկիայի տարածքների վերստին նվաճման և հաստատման ժամանակաշրջան՝ 1137-1198թթ.: Այն տևել է շուրջ **61 տարի** և համընկնում է Թորոս Բ-ի (1145-1169), Մլեհ Ա-ի (1169-1175), Ռուբեն Գ-ի (1175-1187)

և Լևոն Բ իշխանի (1187-1198) կառավարման ժամանակաշրջանների հետ: Ռուբինյանները վերագրավումների արդյունքում էլ ավելի ամրապնդեցին կիլիկյան իշխանապետությունը և նպաստավոր նախապայմաններ ստեղծեցին Կիլիկիայում հայկական թագավորության հաստատման համար **(Բոզոյան Ա., 1988)**:

Չորրորդ՝ Կիլիկիայի հայկական թագավորության ժամանակաշրջան՝ 1198-1342թթ.: 144 տարիների ընթացքում, որը համընկնում է Լևոն Բ թագավորի (1198-1219), Զաբելի և Ֆիլիպի (1219-1226), Հեթում Ա-ի (1226-1270), Լևոն Գ-ի (1270-1289), Հեթում Բ-ի (1289-1305), Լևոն Դ-ի (1305-1308), Օշինի (1308-1320) և Լևոն V-ի (1320-1342) կառավարման ժամանակաշրջանների հետ, Կիլիկիան ամբողջությամբ ձերբազատվեց բյուզանդական կայսրության իրավասությունից:

Հինգերորդ՝ կիսով չափ օտար թագավորների գահակալման ժամանակաշրջան՝ 1342-1375թթ. (Ծովիկեան Յ., 1939), որը տևել է շուրջ **33 տարի** և համապատասխանում է Գվիդոն (1342-1344), Կոնստանտին Գ (1344-1363), Կոնստանտին Դ (1365-1373), և Լևոն Զ (1374-1375) թագավորների կառավարման շրջանին: Արդյունքում Կիլիկիայի գահը Պապեռոնի երբեմնի հայկական տոհմից անցավ կիսով չափ ֆրանսիական ծագում ունեցող Լուսինյաններին[2]:

2. Երկրորդ՝ առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող հարցը՝ Հայկական Կիլիկիայի պետականության գոյության **երկարակեցության խնդիրն է:** Ուղղակի զարմանալ կարելի է, թե ինչպես Ռուբեն Ա-ը և Կիլիկիա տեղափոխված հայերը կարողացան **օտար հողում** ապստամբել բյուզանդական տիրապետության դեմ, բյուզանդացիներին վտարել իրենց իսկ պատկանող կիլիկյան տարածաշրջանից և պարարտ հող ստեղծել փոքրիկ մի իշխանության՝ Ռուբինյան հարստության հաստատման և գոյության համար, որը հետագայում տարիների ընթացքում

[2] Լուսինյանները խաչակիրների հետ Եվրոպայից եկած ազնվականական գերդաստան էր, որն իր անունը ստացել էր Ֆրանսիայի Բուադին գավառի Լուսինյան դղյակից: Այս գերդաստանից են սերում նաև Երուսաղեմի և Կիպրոսի թագավորները:

պիտի վերաճեր երկարակյաց ու ընդարձակ մի իշխանապետության, ապա թագավորության (1080-1375թթ.): Շրջապատված լինելով մրցորդ քրիստոնեական (բյուզանդական և խաչակիր) և թշնամի մահմեդական (Ռումի սելջուկյան սուլթանություն, Սիրիայի ամիրայություն, Եգիպտոսի մամլյուքյան սուլթանություն և մոնղոլ-թաթարական կայսրություն) ուժերով, որոնք պարբերաբար արշավում էին Կիլիկիա՝ երբեմն հաղթելով ու թալանելով, իսկ կիլիկյան իշխաններն ու թագավորները հարկադրված էին ռազմական ուժի հետ մեկտեղ նաև դիվանագիտական ճկուն քաղաքականություն վարել՝ պաշտպանելով երկիրը, հայության ազատ ապրելու կամքը և մշտանորոգ կենսունակությունը **(Եղիայեան Բ., 1994)**:

Հետաքրքրական է, որ Կիլիկիո Հայոց պետականությունն իր գոյության ողջ ընթացքում ունեցել է միմյանց հաջորդած սահմանակից **16** պետություններ: Սակայն XI-XIV դարերում Մերձավոր և Միջին Արևելքի քաղաքական համակարգը կազմող քրիստոնեական և մահմեդական պետությունների շարքում Կիլիկիայի հայկական պետականությունը՝ իշխանության, իշխանապետության և թագավորության տեսքով գոյատևեց անհամեմատ ավելի երկար՝ **շուրջ 295 տարի**, ավելին քան իրեն ժամանակակից հարևան որևէ պետություն: Այսպես.

Դանիշմենդյան էմիրությունը (1071-1174 թթ.), 103 տարի

Փիլարտոսի իշխանությունը (1072-1090 թթ.), 18 տարի

Իկոնիայի՝ Ռումի սուլթանությունը (1077-1277 թթ.), 200 տարի

Սելջուկյան սուլթանությունը (1077-1192 թթ.), 115 տարի

Բյուզանդական կայսրությունը (1080-1176 թթ. սեպտեմբերի 17), 96 տարի

Գող Վասիլի իշխանությունը (1082-1117 թթ.), 35 տարի

Եդեսիայի կոմսությունը (1098-1150 թթ.), 52 տարի

Անտիոքի իշխանապետությունը (1099-1268 թթ.), 169 տարի

Երուսաղեմի թագավորություն (1099-1291), 192 տարի

Տրիպոլիի կոմսություն (1104-1289/1291), 187 տարի

Կիպրոսի թագավորություն (1197-1489), 292 տարի

Հալեպի Զանգիդյան աթաբեկությունը (1150-1181 թթ.), 31 տարի

Սիրիայի և Եգիպոսի սուլթանությունը (1181-1268թթ.), 87 տարի

Եգիպտոսի Մամլյուքյան սուլթանությունը (1268-1375 թթ.), 107 տարի

Իրանի Հուլավյան իլ-խանությունը (1277-1335 թթ.), 58 տարի

Կարամանյան էմիրությունը (1277-1375 թթ.), 98 տարի **(Քիւրքճեան Վ., 1919)**:

3. Պատմա-քաղաքակրթական առումով կարևոր հետաքրքրություն է ներկայացնում նաև Հայկական Կիլիկիայի գոյության **կենսունակության հարցը, այն,** թե ինչպես ստացվեց, որ XI-XIV դդ. Մերձավոր Արևելքում տիրող քաոսային իրավիճակի պայմաններում Կիլիկիայի հայկական պետությունը դարձավ տարածաշրջանի ամենակենսունակ երկիրը:

Կենսունակության գործոնները բազմազան են, և մենք փորձել ենք առանձնացնել առավել կարևորները:

Ա) Հայկական պետականության երկարատև գոյության մասին հստակ պատկերացում կազմելու համար նախ անհրաժեշտ է նկատի ունենալ **Կիլիկիայի արտակարգ աշխարհագրական յուրահատկությունները:** Ռուբինյանների կողմից փոփոխական հաջողությամբ իրականացված քաղաքականությունը զգալի չափով նախասահմանված էր երկրի աշխարհագրական դիրքով: Հայկական տիրույթները, որքան էլ որ սահմանափակ էին, ունեին կարևոր ռազմավարական նշանակություն, որոնց տիրելու համար հնարամտորեն օգտվեցին հայերը: Դաշտային Կիլիկիան բաժանված է երկու հիմնական մասի: Ստորին կամ արևմտյան հարթավայրը ձգվում է Տավրոսի ստորոտից մինչև ծով և ոռոգվում Սիդնոս, Սարոս և Պիրամոս գետերով: Միջնադարում նրա գլխավոր քաղաքներն էին Ադանան և հատկապես Տարսոնը, իսկ Սելևկյան նրա հիմնական նավահանգիստն էր: Վերին կամ արևելյան հարթավայրը արևմտյանից ու ծովից բաժանվում է Ջեբել-Նուր կոչվող լեռնաշղթայով: Մսիս քաղաքը վերահսկում էր վերին հարթավայրից դեպի ստորինը տանող ճանապարհի վրա գտնվող Պիրամոսի լեռնանցքը: Անավարզան և Սիսը գտնվում են ավելի հյուսիս,

Պիրամոսի վտակների վրա: Արևելքում հարթավայրը սահմանափակված է Ամանոսի լեռնաշղթայով, և այստեղ է, որ Կիլիկիան առավել խոցելի էր, քանի որ դեպի Սիրիա տանող լեռնանցքները ավելի լայն ու կարճ էին, քան նշանավոր Կիլիկյան դռները:

Ելնելով տնտեսական առաջնահերթություններից՝ Ռուբինյանները վերահսկողություն սահմանեցին առևտրական ճանապարհներին գտնվող քաղաքների վրա, դուրս եկան Միջերկրական ծով՝ ընդսմին ապահովելով Կիլիկյան դռների լիակատար հսկողությունը՝ հյուսիս-արևմուտքից և հյուսիսից սպառնացող հարձակումներից պաշտպանվելու համար: Այդ ամենը նրանց հակամարտության հանգեցրեց Հեթումյանների հետ: Արևելյան սահմանների պահպանության տեսակետից կարևոր էր Ամանոսի լեռնանցքների վերահսկողությունը, որն էլ նրանց հակամարտության հանգեցրեց Անտիոքի հետ: Բայց նրանց գլխավոր հակառակորդը ողջ տասներկուերորդ դարի ընթացքում Բյուզանդիան էր, քանի որ Կիլիկիայի տարածքը պատկանում էր նրան:

Կիլիկիայի պատմաաշխարհագրական շքեղ ու բազմապիսի միջավայրում, առատ գետերով, արգասաբեր ու բերրի դաշտերով, հարուստ հանքերով, ծովեզերյա գեղեցիկ ափերով օժտված տարածքի վրա էր, որ բազում պատերազմներից ու արշավանքներից, ներքին և արտաքին խժդժություններից հոգնած հայկական բեկորները եկան փորձելու իրենց քաղաքական բախտը:

Բ) Կիլիկիո Հայոց պետության կենսունակության հիմնական ակունքը և ամենավճռորոշ գործոնը, իհարկե, **ժողովրդագրական միատարրությունն** էր: Չնայած Կիլիկիայում առկա էին այլազգիներ՝ որոշակի թվով հույներ, ասորիներ, իտալացիներ, ֆրանկներ, սակայն հայերը կազմում էին երկրի բնակչության ճնշող, նույնիսկ միատարրության հասնող մեծամասնությունը՝ ի տարբերություն այլ պետությունների ժողովուրդների: Այս առումով ամենաբնութագրականն իհարկե խաչակրաց պետությունների օրինակն է, որոնցից յուրաքանչյուրում ֆրանկները, տիրապետող ազգ լինելով հանդերձ, կազմում էին բնակչության չնչին փոքրամասնությունը, ինչը վերջիվերջո պիտի դառնար նրանց կործանման

գլխավոր պատճառը **(Grousset R., 1949; Runciman S., 1952; Prawer J., 1975; Prawer J., 2001; Mayer Hans E., 2000; Mayer Hans E., 1990; Riley-Smith J., 2005)**:

Կարելի է նշել նաև 400-500 հազար բնակչություն ունեցող Երուսաղեմի թագավորության օրինակը, որտեղ լատինական ազգաբնակչությունը կազմում էր միայն 120 հազարը **(Nicholson H., Nicolle Dr D., 2005)**:

Կիլիկյան Հայաստանի ռազմաքաղաքական հաջողությունը պայմանավորված էր հայերի բացարձակ գերիշխանությամբ, որոնք իրենց ձեռքում էին կենտրոնացրել երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքը:

Գ) Հայոց պետությունը **միատարր էր նաև կրոնական առումով**: Ճիշտ է, մինչև XIV դ. սկիզբը հայերի շրջանում առկա էին կրոնական ինչ-ինչ տարաձայնություններ և հակասություններ, սակայն դավանաբանական կործանարար պառակտումներ գոյություն չունեին: Նշված հանգամանքը Կիլիկիան շեշտակիորեն առանձնացնում էր Մերձավոր Արևելքի մնացյալ պետություններից, որոնք բոլորն էլ այս կամ այն չափով բազմազգ և բազմադավան էին, իսկ նրանցից շատերում իշխանությունը գտնվում էր փոքրամասնություն կազմող ազգերի ձեռքում:

Դ) Ժողովրդագրական և դավանական միատարրությունը, անշուշտ, պարարտ հող էր ստեղծում **ազգային մշակույթի, լեզվի, ազգային գիտակցության և ազգային արժանապատվության ձևավորման ու զարգացման համար:** Թեև միջնադարում ազգ հասկացությունը սովորաբար նույնացվում էր դավանական պատկանելությանը, ինչի պատճառով, օրինակ, վրացադավան կամ հունադավան հայերը կոչվում էին վրացի կամ հույն **(Laurent J., 1980; Garsoïan Nina G., Mahé, J.-P., 1997; Հովհաննիսյան Ն., 2003)**, սակայն կիլիկյան շրջանում կարծես թե արդեն սկսում էր տարբերություն դրվել ազգության և դավանանքի միջև:

Ե) Հայկական Կիլիկիայի կենսունակության կարևորագույն գործոններից մեկն էլ **ներքին կայունությունն էր, պետական համակարգի ամրությունը, հստակ կանոնակարգված գահաժառանգության իրավունքի առկայությունը և իշխանության օրինական փոխանցման ապահովումը,** որը թույլ էր տալիս երկիրը զերծ պահել ներքին գահակալական ցնցումներից և մանավանդ արտաքին միջամտություններից: **Կիլիկյան Հայաստանի պատմության մեջ հայտնի չէ որևէ դեպք, երբ գահակալության խնդիրը դառնար արտաքին ուժերի լուրջ միջամտության առարկան:** Ընդհակառակը, առնվազն երկու անգամ Հայոց պետությունն ինքն է խառնվել հարևան երկրներից մեկի՝ Անտիոքի իշխանապետության գահակալական վեճերին: Սակայն Կիլիկիայի պարագայում իշխանության «լեգիտիմության» խնդիրը չի սահմանափակվել միայն գահաժառանգության կանոնակարգված իրավունքի գործադրմամբ, որն ընդամենը ապահովել է իշխանության փոխանցման օրինական ընթացքը իշխող արքայատոհմի ներսում: Դրանից բացի, Ռուբինյանները բաժվել են իրենց «լեգիտիմության» հետ կապված ևս երկու լուրջ խնդիրների. առաջին՝ հույներից զավթված երկրին տիրելու իրավունքի ճանաչումը, որն ի վերջո իրականություն պիտի դառնար Կիլիկիայի և Բյուզանդիայի միջև ուժերի հարաբերակցության փոփոխության արդյունքում, երկրորդ՝ Կիլիկիայում հաստատված մյուս հայ իշխանների վրա իրենց գերակայությունը տարածելու օրինականության հիմնավորումը, որին մասնավորապես ծառայել են Գագիկ թագավորի հետ Ռուբինյանների նախնու ունեցած մերձավորության իրողությունը և նրա արքայական ծագման մասին հետագայում հորինված լեգենդը **(Grousset R., 1995)**:

Ինչպես հայտնի է, հայկական միջնադարյան բազմաթիվ աղբյուրների տվյալներով՝ Ռուբինյան իշխանները սերում էին Մեծ Հայքի վերջին թագավորական հարստության, այն է՝ Բագրատունյաց տոհմից: Տվյալ ավանդույթի առաջացմանն անկասկած նպաստել է այն հանգամանքը, որ Ռուբեն Ա-ը եղել է վերջին Բագրատունի թագավորի՝ Գագիկ Բ-ի զորականներից կամ

իշխաններից մեկը, իսկ նրա թոռը՝ Կիլիկիո Թորոս Ա իշխանը, հույներից լուծել է Գագիկի սպանության վրեժը: Սակայն վաղուց նկատված է, որ Ռուբինյանների ու Բագրատունիների ազգակցական կապի մասին վկայում են ոչ թե իրադարձությունների բուն ժամանակակիցները (ինչպես, օրինակ, Մատթեոս Ուռհայեցին), այլ շատ ավելի ուշ շրջանի, այն է՝ XIII դարի երկրորդ կեսի կամ հետագա դարերի հայ ժամանակագիրներն ու գրիչները **(Միխայէլ Ասորի, 1871; Ալիշան Ղ. հ., 1901)**:

Զ) Հայկական Կիլիկիայի կենսունակության պատճառը պետք է որոնել նախ՝ **գերտերությունների հակասությունների և ապա տարածաշրջանի փոքր պետությունների ուժերի հավասարակշռության ոլորտում:**

Է) Հայկական Կիլիկիայի դիմացկունության անծածուկ բաղադրիչ կարելի է համարել անկասկած Կիլիկիո Հայոց պետության իրավական կարգավիճակի շեշտակի փոփոխությունը, որը պայմանավորված էր միջազգային ասպարեզում Լևոն Բ-ի անձնական տեսանելի հեղինակությամբ, որն առանց այդ էլ բարձր էր մահմեդականների դեմ տարած նրա տպավորիչ հաղթանակների շնորհիվ: Թագադրությունից հետո նա սկսել էր իր անունով ոսկե ու արծաթե դրամ հատել, որոնք շրջանառու էին ոչ միայն Կիլիկիայում, այլև տարածաշրջանում, և ինչը Կիլիկիայի առջև ճանապարհ էր հարթում տարածաշրջանային և համաշխարհային առևտրում ներգրավվելու համար: Միաժամանակ, ճանաչված լինելով գեմանական և բյուզանդական կայսրերի, ինչպես նաև Հռոմի պապի կողմից՝ Կիլիկիո Հայոց թագավորությունը դարձել էր միջազգային իրավունքի լիարժեք սուբյեկտ, որի հետ հարկադրաբար հաշվի պիտի նստեին նաև մահմեդական երկրները, իսկ հետագայում՝ անգամ մոնղոլները:

Ը) Կիլիկիայում ազգային գիտակցության ձևավորման խթաններից մեկը պետք է համարել **Բագրատունյաց թագավորության հիշատակի թարմությունն ու կորուսյալ պետականության վերականգնման երազանքը:** Անիի անկումից (1045թ.) մինչև Կիլիկիո հայկական իշխանության սկզբնավորումն (1080թ.) ընկած երեսունհինգամյա ժամանակաշրջանում, քանի դեռ ողջ էր ազգային պետության

խորհրդանիշը հանդիսացող Գագիկ Բ գահազուրկ թագավորը, հայությունը դեռևս չէր կորցրել սեփական հայրենիք ունենալու հույսերը, որոնք ամրապնդվում էին կապադովկյան աքսորում վերջինիս ծավալած բուռն գործունեությամբ **(Մատթեոս Ուռհայեցի, 1991; Grousset R., 1949)**:

Նույնքան ուշագրավ պետք է համարել այն փաստարկը, որ Գագիկի ողբերգական վախճանը ոչ թե հուսալքող, այլ համախմբող նշանակություն ունեցավ Հայոց իշխանների և զինվորականների համար **(Մատթեոս Ուռհայեց, 1991)**, որոնք ապաստանելով Կիլիկիայում և Կոմմագենեում, նոր եռանդով լծվեցին օտար եզերքներում ազգային պետականության վերականգնման գործին

Թ) Կիլիկիայի հայ թագավորները բարիդրացիական հարաբերություններ ունեին անգլիական թագավորական ընտանիքի հետ: Հայտնի է, որ Լևոն Բ եղել է Ռիչարդ II Առյուծասիրտ (1377-1399) թագավորի հարսանիքի ամենահարգարժան հյուրերի թվում:

Կիլիկիայի թագավորության անկումից հետո Լևոն VI Լուզինյանը մեկնեց Արևմտյան Եվրոպա՝ Հռոմի պապից և եվրոպական միապետներից օգնություն խնդրելու և իր իշխանությունը վերականգնելու ակնկալիքով: Սակայն Պապը բավարարվեց միայն Լևոն VI «Ոսկե վարդի» շքանշանով պարգևատրելուց:

Լևոնին առանձնապես ջերմ էր վերաբերվում Ֆրանսիայի թագավոր Շառլ (Կառլոս) VI-ը՝ նրան դարձնելով իր մշտական սեղանակիցն ու խորհրդատուն: 1385 թ. վերջինիս խնդրանքով Հայոց թագավորը միջնորդական առաքելությամբ մեկնում է Լոնդոն՝ դադարեցնելու Անգլիայի և Ֆրանսիայի միջև 1337թ.-ից ընթացող հարյուրամյա պատերազմը: Այնտեղ Լևոնը ջերմ ընդունելության արժանացավ Անգլիայի թագավոր Ռիչարդ II Առյուծասիրտ թագավորի կողմից **(Ерканян А., 2012)**:

Հայկական և բրիտանական միապետները պայմանագիր կնքեցին, որի համաձայն Կիլիկիայի պետական գանձարանը՝ երկրի ոսկյա պահուստը, դրվեց Անգլիայի պահպանության տակ այնքան ժամանակ, մինչև Կիլիկիայի թագավորության ազատագրումը և վերականգնումը: Իսկ ինչո՞ւ հենց

Անգլիայում: Այդ հարցի պատասխանը դժվար է գտնել: Միգուցե այն պայմանավորված էր հայերի և բրետոն-բրիտների ընդհանուր ծագումնաբանական արմատներով: 1861թ. անգլիացի նշանավոր պատմաբան Բենիամին Թորփիի կողմից Լոնդոնում հրատարակված «Անգլոսաքսոնական ժամանակագրություններ» քառահատոր աշխատության առաջին հատորի առաջին էջում հին անգլերենով՝ անգլոսաքսոներենով նշվում է, որ VIII դ. բրիտանական կղզիներում ապրում էին 5 ազգություններ՝ անգլերը, բրետոնները, շոտլանդացիները, պիկտերը և լատինները: Բրիտանական կղզիներն առաջին անգամ բնակեցրել են բրետոնները, որոնք եկել են Հայաստանից և բնակեցրել են Բրիտանական կղզիների հարավը **(Thorpe B., 1861)**:

Եվ քանի որ թագավորության վերականգնումը տեղի չունեցավ, Կիլիկիայի հայկական գանձարանն առ այսօր մնում է Անգլիայում: Հետագա 600 տարիների ընթացքում Անգլիան, իսկ հետագայում՝ Մեծ Բրիտանիան ամեն գնով խանգարել է հայկական պետականության վերականգնմանը, որպեսզի գանձարանը, որը ժամանակին որոշակիորեն հարստացրել է բրիտանական պետությունը, հետ չվերադարձվի:

Հետաքրքրական է, որ գոյություն ունի գանձարանի պահպանման պայմանագիրը, որը կարելի է գտնել բրիտանական կայսրության օրենքների Свод-ում: Հայաստանի նորանկախ պետականության պայմաններում կիլիկյան հարստության և դրա տոկոսների (ըստ Սուրեն Այվազյանի՝ խոսքը դեպոզիտում գտնվող շուրջ 1 մլրդ ֆ. ստերլինգի մասին է) վերադարձը իրավական տեսանկյունից խնդրահարույց է **(О. Максименко, А. Саркисян, Англичане – это армяне и Британия должна Армении много денег, 2001)**: Բանն այն է, որ բրիտանական իշխանություններին պետք է ապացուցվի, թե ներկայիս հայկական պետությունն ինչ առնչություն ունի Կիլիկիան հայկական պետության հետ:

Նմանատիպ խնդիր ծագել է նաև XX դ. վերջին, երբ ուկրաինական իշխանությունները ցանկացել էին հետ ստանալ զապրոժյան հետմաններից մեկի՝ Լոնդոնում պահ տրված գումարը: Անգլիական իշխանություններն ուկրաինական

իշխանություններին առաջարկել էին նախ և առաջ ապացուցել Զապորոժյան Սեչի և Ուկրաինայի Հանրապետության իրավահաջորդության հարցը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական Կիլիկիայի պատմաքաղաքակրթական հիմնախնդիրների ուսումնասիրումը և դրանց դասավանդման առանձնահատկությունների տարբերակումը բուհում իմացական առաջնահերթ կարևորություն ունի հայոց պատմության ընդհանուր ճանաչողության դիտանկյունից: Պատմական հեռավորությունից տեսանելի է, որ պետականության գոյությունը Կիլիկիայում և ազգային-մշակութային կյանքի զարթոնքը գոյատևելու հնարավորություն ընձեռեց հայ ժողովրդին օտար նվաճողների երկարատև տիրապետության ընթացքում՝ միաժամանակ նպաստելով ազգային ինքնության պահպանմանը, որը բուհական դասընթացի ժամանակ խիստ ուսանելի է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ալիշան Ղ. հ. (1901)**, Հայապատում, Վենետիկ, ս. Ղազար:
2. **Բոզոյան Ա. (1988)**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
3. **Եղիայեան Բ. (1994)**, Հայաշունչ մատեան, գիրք ԺԲ, Կիլիկիոյ Հայոց թագավորութեան երեք դարերը, (1070-1375 թթ.), Երեւան, ա. հ.:
4. **Ծովիկեան Յ. (1939)**, Ռուբինեան հարստութիւն եւ Կիլիկիա, Ա. հ.,Պոստոն:
5. **Հովհաննիսյան Ն. (2003)**, Արաբական երկրների պատմություն, հ.I, Արաբները VII դարից մինչև 1516 թ., Երևան, «Զանգակ- 97» հրատ.:
6. **Մատթեոս Ուռհայեցի (1991)**, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը, ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի, Երևան, «ԵՊՀ հրատ.»:

7. **Միխայէլ Ասորի (1871)**, Ժամանակագրութիւն Ռուբենենց, աշխատասիրութեամբ Կարապետ վրդ. Շահնազարեանցի, յԵրուսաղէմ, ս. Ղազար:
8. **Տեր-Պետրոսյան Լ. (2005)**, Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, Ուսումնասիրություն եւ թարգմանություններ, Երեւան, 2005, «Փրինթինֆո»:
9. **Քիւրքճեան Վ. Մ. (1919)**, Հայկական Կիլիկիա, Նիւ Եորք, «Կոչնակ»:
10. **Ерканян А. (2012),** Армянский след в истории Великобритании, “Собеседник Армении”, 01 Августа.
11. **Максименко О., Саркисян А. (2001),** Англичане – это армяне и Британия должна Армении много денег, Газета “Коммерсантъ”, N 81 (2211) от 15.05.2001, (https://kommersant.ru/daily).
12. **Garsoian Nina G., Mahé. J.-P. (1997)**, *Des Parthes au califat. Quatre leçons sur la formation de l 'identité arménienne, avec une préface de G. Dagron,* Paris, De Boccard.
13. **Grousset R. (1995)**, *Histoire de l'Arménie*, Paris, Payot.
14. **Grousset R. (1949)**, *L'Empire, du Levant: Histoire de la question d'Orient, Nouvelle e'dition revue,* Paris, Payot.
15. **Grousset R. (1934)**, *Histoire des Croisades et du royaume france de Jérusalem,* v I, Paris, Perin.
16. **Laurent J. (1980)**, *L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'en 886,* Lisbone, Librairie Bertrand.
17. **Mayer Hans E. (2000)**, *Geschichte der Kreuzzüge, Neunte, verbesserte und erweiterte Auflage,* Stuttgart.
18. **Mayer Hans E. (1990)**, *The Crusades:* Translated by John Gillingham, Oxford University Publication.
19. **Nicholson Helen, Nicolle Dr D., (2005)** *God's Warriors: Crusaders, Saracens and the battle for Jerusalem,* Osprey Publishing.

20. **Prawer J. (1975)**, *Histoire du royaume latin de Jérusalem,* t. I-II, Paris, French Edition.
21. **Prawer J. (2001)**, *The Crusaders' Kingdom: European colonialism in the Middle Ages,* London, Phoenix.
22. **Riley-Smith J. (2005)**, *The Crusades: A Short History,* Yale University Press.
23. **Runciman S. (1952)**, *A History of the Crusades,* v. II, London, Cambridge University Press.
24. **Thorpe B. (1861)**, The Anglo-Saxon chronicle, according to the several original authorities, London, Longman, Green, Longman, and Roberts.

REFERENCES

1. **Alishan Gh. (1901),** Hayapatum, Venice.
2. **Bozoyan A. (1988),** Byowzandiayi ar&elyan qaghaqakanowt'yowny' & Kilikyan Hayastany' JhB dari 30-70-akan t'vakannerin /The Eastern Policy of Byzantium and Cilician Armenia in the 12th Century 30s-70s/, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR.
3. **Yeghiayan B. (1994),** Hayashownch matean /Hayashunch Matyan/, Book XII, Three Centuries of the Armenian Kingdom of Cilicia, (1070-1375), Yerevan.
4. **Tsovikian H. (1939),** R'owbinean harstowt'iwn ew Kilikia /The Rubinian Dynasty and Cilicia/, A. ed., Boston.
5. **Hovhannisyan N. (2003),** Arabakan erkrneri patmowt'yown /History of Arab Countries/, vol. I, Arabs from the 7th century to 1516, Yerevan, "Zangak-97" Publishing House.
6. **Matthew Urhayetsi (1991),** Jhamanakagrowt'yown /Chronology/, translation into Armenian/, annotations by Hrach Bartikyan, Yerevan.
7. **Mikhayel Asori (1859),** Jhamanakagrowt'iwn R'owbenenc /Chronology/ of Ruben/, with the diligence of Rev. Karapet Shahnazaryan, Paris.

8. **Ter-Petrosyan L. (2005),** Xachakirnery' ew hayery' /The Crusaders and the Armenians/, vol. A, Studies and Translations, Yerevan, 2005.
9. **Kurkjian V. (1919),** Haykakan Kilikia /Armenian Cilicia/, New York.
10. **Yerkanyan A. (2012),** Armyanskiy sled v istorii Velikobritanii /The Armenian trace in the history of Great Britain/, "Собеседник Армении", 01 August.
11. **Maksimenko O., Sargsyan A. (2001),** Anglichane – eto armyane i Britaniya dolzhna Armenii mnogo deneg /The English are Armenians and Britain owes Armenia a lot of money/, Newspaper "Коммерсантъ", N 81 (2211) от 15.05.2001, (https://kommersant.ru/daily).
12. **Garsoian Nina G., Mahé. J.-P. (1997),** *Des Parthes au califat. Quatre leçons sur la formation de l 'identité arménienne, avec une préface de G. Dagron*, Paris, De Boccard.
13. **Grousset R. (1995)**, *Histoire de l'Arménie*, Paris, Payot.
14. **Grousset R. (1949)**, *L'Empire, du Levant: Histoire de la question d'Orient, Nouvelle e'dition revue*, Paris, Payot.
15. **Grousset R. (1934),** *Histoire des Croisades et du royaume france de Jérusalem*, v I, Paris, Perin.
16. **Laurent J. (1980)**, *L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'en 886*, Lisbone, Librairie Bertrand.
17. **Mayer Hans E. (2000)**, *Geschichte der Kreuzzüge, Neunte, verbesserte und erweiterte Auflage*, Stuttgart.
18. **Mayer Hans E. (1990)**, *The Crusades:* Translated by John Gillingham, Oxford University Publication.
19. **Nicholson Helen, Nicolle Dr D., (2005)** *God's Warriors: Crusaders, Saracens and the battle for Jerusalem*, Osprey Publishing.
20. **Prawer J. (1975)**, *Histoire du royaume latin de Jérusalem*, t. I-II, Paris, French Edition.

21. **Prawer J. (2001)**, *The Crusaders' Kingdom: European colonialism in the Middle Ages*, London, Phoenix.
22. **Riley-Smith J. (2005)**, *The Crusades: A Short History*, Yale University Press.
23. **Runciman S. (1952)**, *A History of the Crusades*, v. II, London, Cambridge University Press.
24. **Thorpe B. (1861)**, The Anglo-Saxon chronicle, according to the several original authorities, London, Longman, Green, Longman, and Roberts.

Аветис Арутюнян, Эдгар Оганнесян, Арутюн Папоян

Армянская Киликия: Особенности преподавания некоторых историко-Цивилизационных задач в вузе

Закючение

Ключевые слова и выражения: *Армянская Киликия, Киликийское армянское княжество, Киликийское армянское королевство, географические особенности, демографическое единство, восстановление государственности.*

Изучение истории армянской государственности имеет важное значение в контексте исследования армянской истории в целом. В этом плане почти 300-летнее наследие Киликийской Армении занимает особое место благодаря своему богатому историческому, политическому и культурному опыту.

Настоящая статья рассматривает ключевые историко-цивилизационные аспекты Киликийской Армении — важнейшего периода армянской государственности — и подчеркивает значение эффективного преподавания этих тем в вузах. История Киликийской Армении — это не страница национальной трагедии, а формирующий этап, чьи типологически значимые элементы продолжают оказывать влияние на современность. Проведенное исследование

направлено на более глубокое понимание прошлого через выявление и анализ этих устойчивых исторических реалий.

Avetis Harutyunyan, Edgar Hovhannisyan, Harutyuny Papoyan

Armenian Cilicia: Features of Teaching some Historical-Civilizational Issues in Higher School

Conclusion

Key words and expressions: Armenian Cilicia, Armenian Principality of Cilicia, Armenian Kingdom of Cilicia, geographical features, demographic unity, statehood restoration.

Understanding the history of Armenian statehood holds significant value in the broader study of Armenian history. Within this context, the nearly 300-year legacy of Cilician Armenia stands out due to its rich historical, political, and cultural heritage.

This article explores key historical and civilizational aspects of Cilician Armenia—a pivotal era in Armenian statehood—and emphasizes the importance of effectively teaching these topics in higher education institutions. The history of Cilician Armenia is not a chapter of national tragedy, but rather a formative period whose typologically important elements continue to influence the present. Through this research, we aim to enhance comprehension of the past by identifying and analyzing these enduring historical realities.

Ավետիս Հարությունյան - Պատմական գիտությունների թեկնածու, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է՝ Առաջին աշխարհամարտ, հայ գաղթականություն, Հայոց ցեղասպանություն, Վասպուրականի պատմություն, Հայաստանի պատմական աշխարհագրություն:

Հեղինակ է 3 մենագրության, հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, պարսկերեն, հունգարերեն և գերմաներեն լեզուներով հրատարակված շուրջ 200 գիտական հոդվածների, գիտամեթոդական 3 ժողովածուների (համահեղինակությամբ), Հայոց եկեղեցու պատմության 10-րդ դասարանի դասագրքի (համահեղինակությամբ): avharutunyan@mail.ru,

Էդգար Հովհաննիսյան – Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական սփյուռքի պատմություն, Հայաստան-Սփյուռք հարաբերություններ, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պատմության հարցեր: Հեղինակ է շուրջ հիսուն գիտական հրապարակումների: hovhannisyanedgar16@aspu.am

Հարություն Պապոյան – Մանկավարժական գիտությունների թեկնածու, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են պատմության ուսուցման հիմնախնդիրները: papoyanharutyun17@aspu.am

Аветис Арутюнян – К. и. н., профессор кафедры истории Армении Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна. Научные интересы: Первая мировая война, армянская эмиграция, Геноцид армян, история провинции Ван, историческая география Армении. Является автором 3-х монографий, около 200 научных статей, опубликованных на армянском, русском, английском, французском, персидском, венгерском и немецком языках, а также 2-х учебно-методических сборников (в соавторстве), учебника школы 10-го класса по истории Армянской церкви (в соавторстве, avharutunyan@mail.ru

Эдгар Оганнесян - Декан факультета истории и общесвоведения наук АГПУ им. Х. Абовяна, кандидат исторических наук, доцент. Сфера научных интересов: История армянской диаспоры, взаимоотношения Армения-Диаспора, История

Католикосата Великого Дома Киликийского. Является автором около пятидесяти научных публикаций. hovhannisyanedgar16@aspu.am

Арутюн Папоян – Кандидат педагогических наук, доцент кафедры всеобщей истории и методики её преподавания Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна. Сфера научных интересов - проблемы преподавания истории. papoyanharutyun17@aspu.am

Avetis Harutyunyan - Candidate of historic scienceis, profesor at the Chair of the History of Armenia at the State Pedagogical University after Kh. Abovyan. Scientific interests: First World War, Armenian emigration, Armenian Genocide, history of Van province, historical geography of Armenia. He is the author of 2 monographs, about 200 scientific articles published in Armenian, Russian, English, French, Persian, Hungarian, and German languages, as well as 2 teaching methodical and teaching aid collections (co-authored), a 10th grade school textbook on the history of the Armenian Church (co-authored). avharutunyan@mail.ru

Edgar Hovhannisyan - Dean of the Faculty of History and Social Sciences of the Armenian State Pedagogical University, PhD, Associate Professor. Scientific interests: History of the Armenian Diaspora, Armenia-Diaspora relationship, History of the Catholicosate of the Great House of Cilicia. He is the author of about fifty scientific publications, hovhannisyanedgar16@aspu.am

Harutyun Papoyan – Candidate of Pedagogical Sciences, Associate Professor at the Department of World History and Teaching Methodology, Khachatur Abovian Armenian State Pedagogical University. Scientific interests include issues related to the teaching of history. papoyanharutyun17@aspu.am

Խմբագրություն է ուղարկվել 01.06.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 10.06.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 20.06.2025թ.